ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 46-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԴԻԶԱՅՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 6-ի <Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին> թիվ 751-Լ որոշման 20-րդ կետի 8-րդ և 15-րդ ենթակետերը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրամադրվող անձը հաստատող փաստաթղթերի (ՀՀ քաղաքացուն տրամադրվող նույնականացման քարտի և անձնագրի, փախստականին տրամադրվող նույնականացման քարտի և կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի, քաղաքացիություն չունեցող անձին տրամադրվող նույնականացման քարտի և բկոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի, օտարերկրացուն տրամադրվող ժամանակավոր, մշտական և հատուկ կացության

քարտերի) դիզայնի ընտրության մրցույթի անցկացման հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրամադրվող անձը հաստատող փաստաթղթերի դիզայնի ընտրության մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն հրամանի 1-ին կետով ստեղծված հանձնաժողովին՝ սահմանել Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրամադրվող անձը հաստատող փաստաթղթերի դիզայնին ներկայացվող հիմնական պահանջները:

Ոստիկանության
գեներալ-մայոր Վ. Ղազարյան

<15> 10 2021թ.

ք. Երևան

Հավելված 1
ՀՀ ոստիկանության պետի 2021 թվականի
հոկտեմբերի 15-ի թիվ 46-Լ հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԴԻԶԱՅՆԻ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ
ՀՀ ոստիկանության պետի տեղակալ,
ոստիկանության գնդապետ — Ա.Ֆիդանյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների
վարչության պետ, ոստիկանության գնդապետ — Ա.Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ
ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետի
ոեղակալ, ոստիկանության գնդապետ — Ն.Մանանդյան

ՀՀ ոստիկանության կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների վարչության պետի տեղակալ,
ինքը և ռադիոկապի ապահովման բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ — Գ.Հակոբյան

ՀՀ ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության
պետի տեղակալ — Վ.Պետրոսյան

ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության գնումների
համակարգման և փաստաթղթերի ձևակերպման
բաժնի պետ — Ա.Մնացականյան

ՀՀ ոստիկանության շտաբի ՄՀՎ ՄՈՀ բաժնի հատկապես
կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ,
ոստիկանության կապիտան — Է.Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների
վարչության իրավաբանական բաժանմունքի
առաջատար մասնագետ — Ն.Մանուկյան

Հավելված 2.

ՀՀ ոստիկանության պետի 2021 թվականի
հոկտեմբերի 15-ի թիվ 46-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԴԻԶԱՅՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրամադրվող անձը հաստատող փաստաթղթերի (ՀՀ քաղաքացուն տրամադրվող նույնականացման քարտի և անձնագրի, փախստականին տրամադրվող նույնականացման քարտի և կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի, քաղաքացիություն չունեցող անձին տրամադրվող նույնականացման քարտի և կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի, օտարերկրացուն տրամադրվող ժամանակավոր, մշտական և հատուկ կացության քարտերի (այսուհետ՝ փաստաթղթեր) դիզայնի ընտրության մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման հետ կապված հարբերությունները: Մրցույթի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Ոստիկանությունը:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2. Մրցույթն անցկացնելու նպատակով Ոստիկանության պաշտոնական կայքում տեղադրվում, ինչպես նաև զանգվածային լրատվության այլ միջոցներով տարածում է համապատասխան հայտարարություն՝ կցելով ՀՀ ոստիկանության կողմից տրամադրվող անձը հաստատող փաստաթղթերի տեսակները, դրանց դիզայնին ներկայացվող հիմնական պահանջները՝ հաստատված ՀՀ ոստիկանության պետի 15.10.2021թ. թիվ 46-Լ հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից:

3. Մրցույթին մասնակցել կարող են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք (այսուհետ՝ մրցույթի մասնակից), որոնք մասնակցության հայտերը (փակ ծրարով) ներկայացնում են Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն /այսուհետ՝ Վարչություն/, ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, 17/10 շենք՝ կցելով մրցույթին մասնակցելու համապաստասխան աշխատանքները /դիզայներական լուծումները /:

4. Աշխատանքներն ընդունվում են էսքիզի տեսքով: Էսքիզը ներկայացվում են գունավոր՝ էլեկտրոնային կրիչի (վեկտորային ֆորմատով), ինչպես նաև՝ թղթի վրա /չափսը ընտրվում է մասնակցի կողմից/: Աշխատանքին կցվում է նաև հակիրճ բացատրություն՝ էսքիզում

օգտագործվող պատկերների և զարդանախշերի, դրանց օգտագործման նշանակության, խորհրդի և նպատակի մասին:

5. Մասնակիցն իր համար ստեղծում է նաև 5 նիշից բաղկացած ծածկանուն (թվերի և/կամ տառերի համակցությամբ), որն ամրագրում է բոլոր էսքիզների վրա:

6. Աշխատանքները ներկայացվում են փակ ծրարներով, որոնց մեջ տեղադրվում են հեղինակի անձնական տվյալների (անուն, ազգանուն, հայրանուն, հասցե, հեռախոսահամար) վերաբերյալ թերթիկ և անձը հաստատող փաստաթղթի պատճենը):

7. Վարչությունը հայտերը ստանալուց հետո դրանք գրանցում է քարտուղարության գրանցամատյանում՝ նշելով հայտերի հանձնման տարին, ամիսը, ամսաթիվը: Հայտերը գրանցամատյանում գրանցելուց հետո հայտերը հանձնողներին տրվում է դրանց ընդունման վերաբերյալ համապատասխան ստացական:

8. Հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Վարչությունն ամփոփում է ստացված հայտերը, կազմում համապատասխան տեղեկանք՝ նշելով ներկայացված հայտերի քանակը և տեղեկանքը համապատասխան ստացականով հանձնում է մրցութային հանձնաժողովի նախագահին:

3. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2021 թվականի 15-ի N46-Լ հրամանով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից:

10. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ նախնական և եզրափակիչ: Յուրաքանչյուր փուլում գումարվում է առնվազն մեկ նիստ: Նիստը իրավազոր է, եթե դրան ներկա են հանձնաժողովի բոլոր անդամները:

11. Մրցույթի անցկացման նիստերի օրը, ժամը և վայրը որոշում է հանձնաժողովի նախագահը:

12. Մրցույթին մեծ թվով հայտեր ներկայացվելու և նույն օրը հանձնաժողովի կողմից դրանք ուսումնասիրելու, քննարկելու անհնարինության դեպքում հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ և հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ, որոշում է կայացվում մրցույթի գործընթացը մեկ այլ օր շարունակելու վերաբերյալ: Մրցույթի նախնական փուլին հայտ ներկայացրած մասնակիցները չեն մասնակցում:

13. Մրցույթի եզրափակիչ փուլի օրվա, ժամի և վայրի մասին մրցույթի մասնակիցներին տեղեկացվում են մրցույթ անցկացնելու օրվանից առնվազն երեք օր առաջ:

14. Մրցույթի մասնակիցը մրցույթի եզրափակիչ փուլի օրը պետք է ներկա գտնվել մրցույթի անցկացման վայրում:

4. ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՒԼԸ

15. Մրցույթի նախնական փուլում՝ Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը հանձնաժողովի անդամների ներկայությամբ առանձին-առանձին բացում է փակ ծրարները՝ հանելով ներկայացված աշխատանքները, բացառությամբ հեղինակի անձնական տվյալների վերաբերյալ թերթիկի:

16. Յուրաքանչյուր աշխատանք դնում է իր ծրարի վրա, որից հետո աշխատանքները ներկայացնում է հանձնաժողովի անդամներին:

17. Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրում և քննարկում են ներկայացված աշխատանքները, որից հետո հանձնաժողովի նախագահի կողմից հայտարարվում է բաց քվեարկություն: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»: Հանձնաժողովի անդամի առաջարկությամբ կարող է քվեարկության դրվել աշխատանքի առանձին հատվածին կողմ քվեարկելու հարցը: Ընդ որում, հաշվի առնելով, որ մրցույթին ներկայացվելու են երկու տեսակի փաստաթղթերի էսքիզներ՝ անձնագրի և նույնականացման քարտի տեսքով, հանձնաժողովը դրանցից յուրաքանչյուր համար կազմակերպում է առանձին քվեարկություն:

18. Մրցույթի նախնական փուլում հաղթող են ճանաչվում հանձնաժողովի անդամների կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած աշխատանքները: Ընդ որում՝ հաղթող կարող է ճանաչվել ինչպես ամբողջական աշխատանքը, այնպես էլ դրա առանձին հատվածը:

19. Մրցույթի նախնական փուլի քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո հանձնաժողովի նախագահը ծրարներից հանում է նախնական փուլում հաղթած աշխատանքների հեղինակների անձնական տվյալների թերթիկը և բարձրաձայն հայտարարում նախ անձնագրերի էսքիզների, ապա նույնականացման քարտերի էսքիզների հեղինակների անունը, ազգանունը: Նախնական փուլի արդյունքներն ամփոփելուց հետո հանձնաժողովի քարտուղարի կողմից կազմվում է արձանագրություն՝ դրանում նշելով նախնական փուլը հաղթահարած /մասամբ հաղթահարած՝ այդպիսիք լինելու դեպքում/, ինչպես նաև չհաղթահարած աշխատանքների հեղինակների անունը, ազգանունը:

20. Մրցույթի նախնական փուլի ավարտից հետո՝ հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետում, անցկացվում է մրցույթի եզրափակիչ փուլ:

21. Հանձնաժողովի քարտուղարը մրցույթի նախնական փուլը ամբողջությամբ կամ առանձին հատվածը հաղթահարած աշխատանքների հեղինակներին՝ 3 օր առաջ տեղեկացնում է մրցույթի եզրափակիչ փուլի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:

5. ՄՐՑՈՒՅԹԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԸ

22. Մրցույթի եզրափակիչ փուլի մեկնարկը տրվելուց հետո հանձնաժողովի նախագահը առանձին-առանձին մրցույթի անցկացման սենյակ է հրավիրում մրցույթի նախնական փուլը հաղթահարած մասնակիցներին՝ նախ անձնագրերի բլանկների էսքիզներ ներկայացրած անձանց, այնուհետև՝ նույնականացման քարտերի:

23. Մրցույթի նախնական փուլը ամբողջությամբ կամ առանձին հատվածը հաղթահարած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր աշխատանքի մանրամասն նկարագրությունը /նկարագիրը ներկայացվում է նաև գրավոր եղանակով/:

24. Մրցույթի մասնակիցներին լսելուց հետո հանձնաժողովի անդամները կարող են հարցեր տալ հեղինակներին և մեկ անգամ ևս քննարկել նախնական փուլը հաղթահարած աշխատանքները, ներկայացնել առաջարկություններ՝ դրանցում փոփոխություններ կամ ճշգրտումներ կատարելու վերաբերյալ:

25. Մրցույթի նախնական փուլը հաղթահարած բոլոր մասնակիցների կողմից իրենց աշխատանքների նկարագրությունը հանձնաժողովին ներկայացնելուց հետո, առանց մասնակիցների ներկայության, հանձնաժողովի անդամները կատարում են բաց քվեարկություն:

26. Մրցույթի եզրափակիչ փուլում հաղթող է ճանաչվում մրցույթին ներկա հանձնաժողովի անդամների առավելագույն ձայներ ստացած աշխատանքը: Ձայների հավասարության դեպքում, հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է, ինչը նշանակում է, որ հաղթող է ճանաչվում այն աշխատանքը, որին կողմ է քվեարկել հանձնաժողովի նախագահը:

27. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված աշխատանքների հեղինակներին կարող է առաջարկել որոշակի ուղղումներ կատարել աշխատանքներում:

7. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

28. Մրցույթի արդյունքներն ամփոփելուց և արձանագրությունը կազմելուց հետո հանձնաժողովի նախագահը սենյակ է հրավիրում մրցույթի մասնակիցներին և բարձրաձայն հայտարարում է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված աշխատանքները և դրանց հեղինակների անունը և ազգանունը:

29. Մրցութային ֆոնդը կազմում է երեք միլիոն ութսուն հազար /3.080.000/ ՀՀ դրամ, որից հինգ հարյուր հազար /500.000/ ՀՀ դրամ հատկացվում է նույնականացման քարտի դիզայնի /երկու հարյուր հիսուն հազարական դրամ՝ համապատասխանաբար դիմերեսի և դարձերեսի/ համար, իսկ երկու միլիոն հինգ հարյուր ութսուն հազար /2.580.000/ ՀՀ դրամ՝ անձնագրի դիզայի համար: Ընդ որում, անձնագրի շապիկի դիզայնի համար նախատեսված է երկու հարյուր հազար /200.000/ ՀՀ դրամ, առաջին և երկրորդ էջերի /հիմնական էջ/ դիզայնի համար՝ հարյուր հազար /100.000/, իսկ մնացած 38 էջերից յուրաքանչյուրի համար՝ վաթսուն հազարական ՀՀ դրամ: Մրցութային ֆոնդը համամասնորեն, կախված աշխատանքի ամբողջական կամ մասնակի ընտրությունից, բաշխվելու է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված աշխատանքների հեղինակների միջև:

7. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

30. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է Ոստիկանության պաշտոնական կայքում:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

31. Հանձնաժողովի որոշման հիման վրա Ոստիկանությունը հաղթող ճանաչված մասնակցին /մասնակիցներին/ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է գնման պայմանագիր, որը մասնակիցը 3 աշխաանքային օրվա ընթացքում ստորագրում և վերադարձնում է Ոստիկանություն:

9. ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

32. Հանձնաժողովը մրցույթը չկայացած է հայտարարում, եթե

1) դադարել է գոյություն ունենալ գնման պահանջը,

2) ոչ մի հայտ չի ներկայացվել,

3) մրցույթի արդյունքում հաղթող (ներ) չի ճանաչվել կամ գնման պայմանագիր չի կնքվել:

10. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

33. Մրցույթում հաղթած աշխատանքների նկատմամբ հեղինակային գույքային իրավունքները գնման պայմանագրով մրցույթի ավարտից հետո պատկանում են Ոստիկանությանը:

34. Մրցույթին մասնակցած և հաղթող չճանաչված աշխատանքները պահվում են Ոստիկանությունում: Դրանց նկատմամբ հեղինակային գույքային իրավունքները պատկանում են հեղինակներին: